Ո՞ր ազգութեան կը վերաբերէր Պողիկտոս, կարծիքները կը տարբերին. անմահ թատերգակն Գորնէյլ, որ 1643 ին բեմադրեց Պողիկտոսը և պանծացուց անոր յիշատակը, հայազգի կը համարի զայն և իշխանական ցեղէ, և կ'անուանէ Seigneur Arménien։ Ալիշան ալ նոյն կարծիքն ունի (Տե՛ս Ցուշիկ, Բ. էջ 239)։ Շատ կանուխէն, ինչպէս տեսանք, Մելիտինէն հայաքաղաք մըն էր, որ յետոյ Երորդ Հայք անունը ստացաւ. հաւանական է որ Պողիկտոս հայ ծագում ունէր, թերևս ազնուական գերդաստանէ սերած։ Մելիտինէի հայ ազնուականութիւնը շատ վաղնջական պէտք է նկատել։ Բեռեռական արձանագրութեանց մէջ կը յիշուին Մելիտեանք = Մելիտայ, Մելիտինայք եւ Մելիտինեանք (Տե՛ս Բանասէր, Հայ Նախարարութիւնները բեւեռական արձանագրութեանց մէջ. 1901, էջ 249)։ Թերևս այդ ազնուականութեան համար էր որ՝ Պողիկտոս ամուսնացաւ Մելիտինէի հռոմայեցի կուսակալին աղջկանը հետ. սոսկական մը պիտի չկրնար ընել զայդ, ինչպէս կը կարծէ Ալիշան (Նոյն, Անդ)։

3. Պողիկտոս վկային պատմութիւնը.

Պողիկտոսի անունը նշանաւոր եղաւ Արևելքի և Արևմուտքի մէջ։ Արևելեան վկայաբանութիւնը կը յիշատակէ 7 Յնվր. 14 Փետ. ի Մելիտինէ. 22 Յնվր. ի Նիկոմիդիա. 21 կամ 22 Մայիս՝ ի Կեսարիա Կապադովկիոյ։ Ասորական վկայաբանութիւնը՝ 19 Ապր. և 3 Մայիս, իսկ Հերոնիմեանը՝ միևնոյն թուականներուն, ինչպէս նաև 13 եւ 27 Ապր.։ Հայ եկեղեցւոյ տօնելի սուրբերէն մին է Պողիկտոս։ Ի պատիւ անոր եկեղեցիներ կառուցուած են Դ. դարու կիսուն, ի Մելիտինէ, սուրբին տապանին վրայ, որուն պարգևը կը նկատուի Եւդիմէոս՝ Պաղեստինի հռչականուն անապատականը. ի Կ. Պոլիս, Վաղենտիանոս կայսեր (364–375) աղջկան կողմէն հիմնուած եկեղեցին, որուն այցելած է Տուրացի Գրիգոր Եպս., բարեպաշտ տիկին մը, Յուստինիանոսի օրով, այդ եկեղեցւոյն ներքին կողմը ոսկւով զարդարած է, իր ստացուածքը նոյն կայսրէն ազատելու համար. մարդիկ նոյն եկեղեցւոյն մէջ կը կատարէին իրենց ամենէն հանդիսաւոր ուխտը։ Ռավեննայի մէջ ալ Ս. Պողիկտոս ունեցած է եկեղեցի մը, որուն նաւակատիքը կը կատարուէր Ապր. 9 ին.